

նաև պատմական համառոտ ծանոթութիւններ իմ հաւաքած հում նիւթերու մէջէն:

Զեռագիր Տաղարանիս մասին աւելորդ կը սեպեմ ծանոթութիւն աւելցնել հոս, քանի որ արդէն մանրամասն ցուցակագրած եմ և հետզհետէ պիտի հրատարակուի:

Միայն կ'արժէ աւելցնել որ ձեռագիրս գրուած է աղագրեալ. չունի կոշիկէն չի պակսիր. գրութիւնը անխնամ է և 1700ական թուականի արտագրութիւն. (էջ 66ին վրայ կայ տաղ մը գրուած ՌՃՀԳին (1173=1724) ծովասոյդ եղող քրիստոնեայ ուխտաւորաց նաւու մը վրայ): Տաղարանս կը պարունակէ Առաքելի, Նաղաշի (Մկրտիչ), Յովհաննէս երզնկացւոյ և ուրիշներու տաղերը: Վիեննայի Միտիթ. Մտղր. թիւ 436 հատակտորոց ձեռագրին ի՛նչ հատուածը ունի իմ այս տաղերուս մէկ մասը. ասիկա ինծի միակ ծանօթ (իմինէս զատ) օրինակն է Մարտիրոսի տաղերուն. ու տրուած տեղեկութիւններէն դատելով իմինիս հնութիւնը նախընտրելի է Վիեննական Միտիթ. մտղր.ինէն:

Ա. տաղը գրուած է Գաւիթ երիցու մը վրայ որ պտրտած է թրակիոյ և Պուլկաւրիոյ զանազան տեղերը: Այս տաղս կայ Վիեննայի Մատենադարանի թիւ 436ին մէջ (թուղթ 6ր.):

Գաւիթ իրիցու գործեալ չարիքն է:

Գաւիթ էրէց յըստամալուն տեղեալ սուլու մանաստիրոս:

Դու նուիրակդ յուռումէլու սահմանողին հէրն անիծած:

Ելար յէտրէնէ գնացիր. հինգ վեց ամիս հոն մնացիր,

Զթէլպիսութիւնդ իմացուցիր, էկած ճանապուղ դուրն անիծած:

Գնացիր հասար պապատաղի. տէր մկրտչին եղար եախի.

Զփողն կիսեցիր թապախի. քոյ երեսին ջուրն անիծած:

Կեղծիք շրջիս սեւուկ շալով. փարիսեցի ձեւանալով.

Պատմագիրք կու կարդաս, լալով, քոյ արտասուաց ծորն անիծած:

Արաբացի գայլ նմանիս. գծեւ քահանի միայն ունիս.

Ժամ ասելով կու փրփրիս. քոյ բերնի փրփուրն անիծած:

Հետ թաթոսին արիւր պագար. կերար զգրամն երկու հագար:

Յետոյ գնացիր սուտ երդմեցար. քոյ պիղծ առուտուրն անիծած:

Աճառներուն դու հիւր եղար. երէք ամիս պատին կերար.

Ըզվարագուրն է՞ր գողացար, քեզ նման պիղծ հիւրն անիծած:

Թէլպիսութեան մէջն էս սընէր. մարդ չի կարեր հետ քեզ հնէր.

Դու ի մօրէ չար էս ծնէր. քոյ մամդ ու մօրքորդ անիծած:

Դու չէս էրէց ցըցի որպէս. զօրն ի բուն արիւն կու լակէս.

Դիր գրելով գմարդ կու խաբէս. քո կաղամարի մուրն անիծած:

Դու յայտնապէս յուղայ եղար. այն իրիցու փողի համար.

Յիսուն ղուռուշ կաշառք կերար. քո կերած ապուրն անիծած:

Գնացիր բէյթամալճուն ասիր. մարդ է մեռեր շուտով հասիր.

Զորբերու հացըն կտրեցիր. քո հացի խմորն անիծած:

Այ եղկելի և խելագար. կէս հալապի չուխին համար.

Էրէց էիր է՞ր գող եղար. քո երեսին ջուրն անիծած:

Համբաւեցիր քեզ ու քաղաք. յամէն երկիր առ հասարակ.

Յուռումէլու գող նուիրակ. քո համբաւուն լուրն անիծած:

Ելար փախար գաղտագողի. զսահաթէ փողն ուտեմ տէի.

Խօճայ սէֆէր յանկարծակի. հասան թէ ուղուրտ անիծած:

Յամթալի յետ դարձուցին ըզզահաթի դրամն առին.

Զքըսուրըս տարաւ ղաթրճին. ղաթրճուն այլ փիրն անիծած:

Զի վարձեցին դարձեալ կրկին. խայտառակեց այն ձին.

Ընկեց ի ցեխն քաղաքին. քո թաղուած չամուրն անիծած:

Ելար եկիր խայտառակած. բոլոր անձամբդ ապակտնած.

Որպէս գումշ ցեխէն հանած. դողայիր սարսուրդ անիծած: